

# ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՔ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 153

27 ՅՈՒՆԻՍ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# ՏՕՆԱՑՈՅՑ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Յունիս | 28 | † Կիր. | գկ. | Դ. Զկնի Հոգեգալստեան: |
| | 29 | Բշ. | դձ. | Սրբոց երկոտասան առաքելոցն եւ գըլխաւորացն Պետրոսի եւ Պօղոսի: |
| | 30 | Գշ. | դկ. | Սրբոյն Դանիէլի մարգարէին եւ երից մանկանցն: |
| Յուլիս | 1 | Դշ. | աձ. | Պահոց: |
| | 2 | Եշ. | ակ. | Սրբոց թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ: |
| | 3 | Ուր. | բձ. | Պահոց: |
| | 4 | Շբ. | բկ. | Ս. Զաքարիա մարգարէին եւ Ոնոփրիոսի սուրբ Հօրն: |

# ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Չորրորդ տարի — 27 Յունիս 1914 — Թիւ 153


«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաթերթը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Ը. Թէրզեան, Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ 23 Նոյեմբերի 1912, թիւ 60780 թուահամարաւ:

## ԴԷՊՔԵՐ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

### ԳԱՅԹԱԿՂԱԼԻՑ ՅՕԴՈՒԱԾԻ ՄԸ ԱՌԹԻՒ

Ա.

*Մեծ ցաւով կարդացինք—մեծաւորաց անօրինամբ—արգիլեալ Թերթի մը մէջ վարդապետ ոմն ստորագրութեամբ յօդուած մը, լի նախատանօք ընդդէմ հոգեւոր իշխանութեան։*

*Չէինք ուզեր իսկ հաւատալ թէ իրօք եկեղեցականի մը գրչին ծնունդ լինէր այն, վասն զի կղերը պէտք է առաջինն ըլլայ յարգելու իշխանութեան հրամաններն և ըզգուշանալու գայթակղութիւն տալէ այլոց։*

*Եթէ այսօր Արեւելքի մեծ մասը կը հեծէ հերձուածի և հերետիկոսութեան քաղցկեղին ներքեւ, պատճառն այն է որ եկեղեցականք իրենց բարձրութենէն ինկան երբեմն, և ժողովրդոց՝ ուղղութեան և ճշմարտութեան, հնազանդութեան և Ս. Հաւատոյ ուղին մատնանիշ չըրին մշտատեւ արթնութեամբ, այլ մանաւանդ շատեր իրենց պարտուց մատնիչներն եղան, յայտնի կամ ի ծածուկ կըռուեցան Միութեան կեդրոնին դէմ, և հակակաթողիկէ նախապաշարումները գգուեցին փոքրոգի սնափառութեամբ և վատասիրտ հաճոյակատարութեամբ։ Ու այդպիսիք արժանի եղան Հովուին Սրբոյ յանդիմանութեան. «Հովիւք բազումք ապականեցին զայգի իմ, եղծին զբաժին իմ, արարին զվիճակն իմ ցանկալի յանապատ անկոխ. եղաւ յապականութիւն կորստեան» (Երեմ. ԺԲ. 10.)։*

*Գէթ անցելոյն աւերակներ պէտք է դաս մը ըլլան մեզ, որպէս զի չբաժնուինք մա-*

ղիւ չափ Միութեան կեդրոնէն, և գիտնանք հանապազ զոհել մեր տեսութիւններն ու նախասիրութիւնները՝ Աստուծոյ Փոխանորդին որոշմանց ու բաղձանաց առջև։

Որչափ բարի կ'ըլլայ կեանքն, ու ո՜րչափ երջանիկ մահն անոր՝ որ իր ականջը դարձուցած դէպի Քաղաքն Յաւիտենական, ամենէն դժուարին ու կնճռոտ խնդիրներն հեշտիւ և ապահովապէս լուծելու գաղտնիքը գտած է. ու ի գործ կը դնէ։ «Ահա իմ սկզբունքս, — կ'ըսէ նա —, խոնարհօրէն ու յարգալիր կերպիւ կը յայտնեմ իմ կարծիքս մարդոց ու իրաց նկատմամբ, և յետոյ կ'ուզեմ լսել Հռովմի ձայնը փրկաւէտ և իմաստուն, վեհ և խաղաղարար։ Հռոմ կ'ըսէ ինձ՝ գնա՛, կ'երթամ, եկո՛ւր, կուգամ. խօսէ՛, կը խօսիմ. լռէ՛, ու կը լռեմ։» Պատշաճ ու օրինաւոր է որ վերջին բառը միայն Մեծաւորաց. ու ի՞նչ ըսել հոս այդ Մեծաւորը կը կոչուի Փոխանորդ Յիսուսի Քրիստոսի, Գերագոյն Հովուապետ, անսխալ ու տիեզերական Վարդապետ Եկեղեցւոյ։

Բայց Ս. Պապն ուղղակի և անընդմիջաբար չի կրնար կառավարել վերածնեալ մարդկութիւնն աշխարհի հինգ մասերուն մէջ, իր կողմանէ կարգած է Պատրիարքներ, Եպիսկոպոսներ ու Առաջնորդ. ո՛վ որ ասոնց կը հնազանդի, հնազանդած է Հռովմի, ո՛վ որ ասոնց դէմ կ'ընդվզի, ապստամբ մըն է Հռովմի դէմ։

Խնդիրը շա՜տ պարզ է. և կը զարմանամ թէ ի՛նչպէս ինքզինքնին խելացի կարծող և իրապէս ուրիշ նիւթերու մէջ ուշիմութիւն ցուցնող մարդիկ չկրցան տակաւին հասկնալ զայս։

*
* *

Եթէ կղերական մը յանցաւոր է Հռովմի առջև, երբ հրապարակաւ քննադատէ իր Մեծաւորն նոյնիսկ յարգութեամբ և բարեկիրթ ոճով, ի՞նչպէս պիտի կրնայ ինքզինք արդարացնել նա՝ որ իր յօդուածը շարադրած է այնչափ դառնութեամբ և անարգանօք, նա որ յամառ ու անզեղջ ըմբոստութեան կոչում կ'ընէ ժողովրդին նա որ արդէն գերագրգռուած միտքերն ևս աւելի կը ժտի գրգռել, նա որ ատելութեան և հակառակութեան ցանուած որոմները կը սնուցանէ, և նորագոյններ ևս կը սերմանէ լիաբուռն ու առանց խղճահարութեան, նա վերջապէս որ չի խորհիր թէ իր վիրաւորած Հայրապետը Պիոս Ժ.Ի և կաթողիկէ Եւրոպիոյ սիրոյն և վստահութեան եղած է արժանի, և իրեն հակառակորդ ունեցած է մարդիկ որոնք կոնդակներ այրեցին ու պատառեցին, Ամենասուրբ Հաղորդութեան առջև լուտանք և հայհոյութիւն արձակեցին, հրեշտակաց Թագուհւոյն տօնական շքեղ հանդէսները սուգի փոխեցին, հաշտարար ու միջնաքաւիչ Պատարագները խանգարեցին ու արգիլեցին, նուիրական տաճարներէն ներս ու դուրս ամէն անզգամութիւն գործեցին, Ս. Պապէն հաստատեալ եպիսկոպոսաց դէմ ցոյցեր սարքեցին, պաշտօնական գրութեանց մէջ զՀռոմ թշնամի երկիր կոչեցին, և Ս. Գահուն Վեհաշուք հովանւոյն ներքև կազմեալ Սիւնհոդոսն իբրև ապօրէն բամբասեցին, ոչ-քրիստոնեայ ոստիկաններու ծաղուն և բարեպաշտօն օտարազգիներու զզուանքին առարկայ ըրին զմեզ, «ճանապարհ խաչի»ները վար առին և խորտակեցին, Յիսուսի պաշտելի սրտին ջերմեռանդութեան դէմ բողոք բարձին, Ծայրագոյն Քահանայապետին ազդարարութեանց դէմ հեստեցին, և իր բանադրանքի պատիժներն անգամ հեգնեցին ու արհամարհեցին։ Եւ այս ամենայն կաթողիկէ՛ անուան տակ. կարելի՞ է երևակայել քան զայս առաւել արտասուելի դժբախտութիւն։ Երեմիայի արցունքները պէտք են մեզ ողբալու համար այսչափ չարի՜ք ու աղէ՜տք։

Արդեօք Տէրն ո՜րչափ բարկացած է մեզ դէմ. «Եւ հեղից ի վերայ նոցա զչարիս իւրեանց։» (Երեմ. ԺԴ. 16.) Իցի՜ւ ապաշխարէինք ի խորոց և ի մոխիր, և փութայինք հեռացնել մինչև երկնից չա՜նթերն ահաւոր։

Փոխանակ ամէն օր և օրը մի քանի անգամ ճամարտակօրէ՛ն և ի զո՛ւր ազգասիրութեան վրայ մեծաբանելու, կղեր ու աշխարհական, ամենքս ալ պէտք է գիտնանք թէ ճշմարիտ ու անխարդախ ազգասիրութիւնը գլխաւորապէս կը կայանայ առաքի-

նութեան և պարտաճանաչութեան մէջ, թէ մոլիներն ու անզեղջ մեղաւորները ազգի մը պատուհասներն են միշտ, և թէ նա է իրապէս ազգասէր որ երկնից օրհնութիւնները կը հրաւիրէ իր և իր եղբարց վրայ։ Եթէ կը բաղձանք յաւելուլ ստուգիւ Հայութեան պատիւն ու երջանկութիւնը, պէտք է բողոքենք գործուած ապիրատութեանց դէմ, ջանանք մերովանն հատուցում ընել Աստուծոյ, և բանիւ ու գործքով մեր Երանաշնորհ Հարց շաւղէն ընթանանք, որոնք ո՛չ միայն քրիստոսամարտ սրբապղծութիւններէ, այլ և ամենադոյզն մեղաց ստուերէն անգամ կը խորշէին և կը գարշէին յաւէտ։ Այն ատեն մարգարէին շեշտերը քաղցրալուր՝ պիտի հնչեն նաև մեզ համար. «Եւ փոխանակ ամօթոյ ձերոյ՝ կրկին ուրախութիւն, և փոխանակ անարգանաց ձերոց՝ ցնծութիւն։» (Եսայի, ԿԱ. 7.)։

Պ. Ս. Ծ.

# ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ (*)

## ՍԷԿԻԶԻՆՃԻ ՊԱՊ

**Պու Քէմալէյաթէ պիր սուրէթթէ հայրէթ Քիիլէ չըգմըջ օլան պու գատար խարիգիւլատէ մէրալիյէ, Յիսուս Քրիստոսըն Ալլահ օլտուղընը գապուլ իթմէսինէ հիչ պիր մանիա վէրիլէմէզ:**

(Տէվամի)

Յիսուս Քրիստոսա գարշը օլան իթիրազըթը, Առաքեալլարըն վէ Աւետարանիչլէրին պաշըմա չէվիրէրէք միւշքիլաթը ազալթմալը՞ մը թէսավվուր իտէճէքսինիզ. — Օնըն ալլահլըգ մասալընը պունլար իճատ իթտիլէր, պիզի տէ գանտըրմագ իսթէտիլէ՞ր մի տէյէճէքսինիզ. Էյի պագընըզ, քէնտի քէնտինիզի պիր խայլը իմքեանսըզլըգլարա չարփմագ թէհլիքէսինտէսինիզ. Պօսիւէնին տէտիյի կիպի, «Պիւյրէի արզ իւզէրինտէ վագը օլմուշ օլան գանաաթլարըն էն գավիսի, էն ինանըլմայաճագ չէյլէր իչինտէ, էն պէօյիւք միւշքիլաթ արասընտա, ինանըլմագ խուսուսընտա էն միւթէրէտտիտ վէ գօրգագ օլան քիմսէլէր ինտինտէ հասըլ օլմուշ օլան պիր գանաաթըն հէր հալտէ պիր սէպէպի զահիրիսի օլմալը տըր։ Սախթէքեարլըգ պու գատար ուզաղա կէտէմէզ, հայրէթ պու գատար ուզուն տէվամ իտէմէզ, համագաթ տա պու գատար հիսապըը վէ մունթազամ օլամազ։ Տինսիզլէրին իթիրազլարընըն սօնունա գատար կիտէլիմ։ Պիզիմ Ս. Առաքեալլարըմըզ հագգընտա նէ՞ թէսավվուրտա տըրլար։ Աճէպա օնլար կիւզէլ պիր մասալ իճատ իտիպ տէ պիւթիւն ալէմէ տէ օնը թալիմ իթմէ՞ք մի իսթէմիշ տիրլէր։ Ֆագաթ պունը ագըլ գապուլ իտէճէք պիր եօլտա եարմալը իտիլէր։ — Օնլար քէնտի արալարընտա պիլէ միւթթէֆիգ օլմայան ահմագ պուտալալա՞ր մը իտիլէր։ — Լաքին օնլարըն սիյրէթի, օնլարըն եազտըգլարը, վազ էյլէմիշ օլտուգլարը գանունլար, թէէսիս իթտիքլէրի ինթիզամ, նիհայէթը վուգուաթ այնէն պու իտտաայը րէտտ իտէր։ Մէհարէթին նա միւնասիպ պիր սուրէթտէ իճատ իթմէսի վէ համագաթըն տա պու գատար մէհարէթլէ թաթպիգ էյլէմէսի իշիտիլմիշ չէյլէրտէն տէյիլ տիր։ Բօսիւէյէ պագընըզ, պունը թամամ իտէնլէրին հիյլէքեար քիմսէլէր օլմատըգլարընը, միւվէֆֆագըյէթէ պագընըզ, պունը թաթպիգ իտէնլէրին ագըլսըզ քիմսէլէր օլմատըգլարընը իգրարա մէճպուրսընըզ։ Իշթէ Առաքեալլար, եօլիւլէր արասընտան գըյամ իթմիշ օլան Յիսուս Քրիստոսը չօգ տէֆա, ուզուն միւտտէթ, չօգլարըմըզ պիր արատա կէօրմիւշ, իշիթմիշ վէ ծունունլա թէմաստա պուլընմըշըզ, տէյօրլար։ Պու տէտիքլէրի տօղրու իսէ, արթըգ վէրէճէք նէ՞ ճէվապ գալըր։ Շայէտ տօղրու տէյիլսէ, մագսատլարը նէ՞ օլապիլիր։ Պու գատար զահմէթլէրինէ մուգապիլ, իսթիֆատէլէրի, մէնֆաաթ վէ միւքեաֆաթլարը նէ՞ տիր։ Պիլ. պէքլէտիքլէրի վար իտի իսէ, եա պու տիւնեատա իտի վէ եախօտ վէֆաթլարընտան սօնրա։ Պու էօմրտէ պիր չէյ պէքլէմիշ օլտուգլարընա հէր չէյ մուխալիֆ տիր. տիւշմէնլէրինին նէֆրէթի, գուվվէթի վէ սաէ-

(*) Տես Թիւ 150, էջ 355։

տի, հաթթա պիզզաթ քէնտիլէրինին զաաֆը զաթիլէրի պունա մանի օլուր։ Շու հալտէ օնլարըն խնթիզար իթտիքլէրի մուքաաֆաթ ասարը մուսթագպէլէտէ մէվգիի իճրայա վազ օլունաճագ մուգ!աֆաթլար տըր։ Պու թագտիրտէ տախի, եա Ճէնապը Հագտան քէնտի րուհլարընըն սաատէթինի վէ եախօտ խնսանլար թարաֆընտան չէրէֆ ու նամլարընըն մուէպպէտէն իպգասընը պէքլէյօրլարտը։ Սահիհ Ալլահըն վար էյլէտիյի սաատէթի ումույօրլարսա, տունեայը ալտաթմագ ֆիքրինտէ զահիր օլամազլար։ Վէ չայէտ տունեա, նամլարընը խատմէ իթմէք, թարիխտէ պիր մէվգիի մուհթագ իչղալ էյլէմէք արզուսը պու գապա ֆիգիրլի պալըքճըլարը քէնտի գայըգլարընտա չէվգէ կէթիրմիչ տիր տէմէք կիպի պիր խիւլեա թէսավվուր խտէճէք օլուրսա, եալընըզ չունը տէրիմ քի, էյէր պիր Պետրոս, պիր Անտրէաս պիր Յօվհաննէս օ գատար թագիպաթ, զուլմ ու թէաատտիյաթ արասընտա պէր վէճհի բէչին գըրիաթիօնլըղըն չէրէֆ ու իհթիչամընը վէ պու կիւն պիզիմ քէնտիյէ հագգընտա իզհար էյլէտիյիմիզ հիւրմէթ ու թէվէճճիւհիւ օ գատար ուզագտան կէօրէպիլտիլէրսէ, արթըգ պէն Պետրոսըն, Անտրէասըն, Յօվհաննէսին, Ալլահըն րուհը վէ հագիգաթըն գուվվէթիյլէ մէմլու ատէմլէր օլտուգլարընը հէր ազլը պաշընտա օլան քիմսէյէ իզնա իթմէք խուսուսընտա պունտան տահա գուվվէթլի պիր տէլիլէ զաթիէն լիւզում կէօրմէմ»։[1]

Իշթէ Պօսիւէնին մանթըգը. չիտտէթի տէհասը վէ պէլաղաթը մութատէսիյլէ մէյտանա չըգարըլան մուչքիլաթտան պազըլարը։ Ֆագաթ տահա պաչգա մուչքիլաթ տա մէվճուտ տըր, պա խուսուս. պունլարըն քեաֆֆէսինտէն տահա պէօյիւք օլան, սուրէթի գաթիյէտէ հալլի մումքին օլմայան, պիզզաթ Րուսօնըն պիլէ ուզագտան ուզաղա քէչֆ իթմիչ վէ ֆէննի թէապիգի հալըրըն, ճէվապ վէրիլէմէյէճէք պիր րուչէնլիյէ իֆրազ էյլէմիչ օլտուղը պիր մուչքիլաթ վար տըր։ — Քրիստոսըն պու թապիաթընը, սիյրէթինի, հայաթընը. վէֆաթընը. բլանընը, ֆիզիօնօմիսինի Առաքեալլար իճատ իթտիլէր — տէյօրսընըզ, տէյի՞լ մի։ Ֆէննի թէտգիգի հազըր տահա իլէրի կիտիյօր վէ տէյօը քի «մուճիտ կէօսթէրմէք իմքեանսըզ տըր, Քրիստոսըն թապիաթը իյահիյէսինի իճատ իտէպիլմէք իչուն, Քրիստոս օլմագ իճապ իտէրտի։

Ուեստարանլար հագգընտա պունա էյլէտիյիմ վազըթ, զաթէն Չէննինկ, Կէօթէ վէ խամի մէճհուլ օլան տիկէր պիր մուէլլիֆին ղայէթ վազիհ չէհատէթիյլէ թաստիգ էյլէտիմ քի Առաքեալլարըն, քէնտի թապիաթլարը ֆէվգինտէ օլան պիր թապիաթ իճատ իտէպիլմէլէրի գապիլ տէյիլ տիր։ Զիւնքի, թէքրար իտէրիմ. պիր վազըթ տէնիլտիյի կիպի, մէսէլէ՝ մէսէլա էօյլէ արասընտան զըեամ վագաասը կիպի պիր վագաա իճատ իթմէք եախօտ սայիր պազը վագաալար թէրթիպ ու թամամի էյլէմէքտէ տէյիլտի, եա հատտը զաթընտա գայիմ օլան հիչ պիր թարաֆտան մուգաեէնէթլէ մահքիւմ պուլունմայան պիր թապիաթ իհտաս իտիլմէլի իտի։ Իմտի չայէտ Առաքեալլար պունը թէճրիպէ իթմիչ օլսալար, իմսանի պիր թապիաթ վէ պէլքի իհթիմալէ կէօրէ, պիր եէհուտի թապիաթը, Հիլլէլ եախօտ Գամալիէլ կիպի սահիպի քէմալ պիր Րապպի, չօգ չօգ, Եղիա վէ եա Յօվհաննէս Մկըրտիչ կիպի պիր բէյղամպէր իճատ իթմէլիյէր իտի։ Վէ եախօտ հէր քէսճէ մարուֆ օլան սիմալար խարիճինտէ չըգմագ թասավվուրլարընտա պուլունսալար, օ հալտէ գուլլանտըգլարը թէտպիրլէր ֆարգլը օլմալը վէ տիրի պիր չախսիյէթ կէօսթէրմէմէլի իտիլէր։ Զիւնքի կէօզլիւմիւզ էօնիւնտէ խնպիսաթ պուլան, եանի էն խարիգիւլատէ, էն եէնի, զէմանընըն էֆքեարընա էն մուխալիֆ, Եէհուտիլէրին պէքլէտիքլէրինին էն զըտտը պիր սէօզ իլէ էն ազ խնսանի օլան եախօտ տահա տօղրուսը, էն զիատէ խնսանի թապիաթըն ֆէվգինտէ, այնի զէմանտա հէմ խնսանի վէ հէմ տէ ալլահանի օլուպ, մա մաֆիհ տէ տիրի պուլունան, եաչայան պիր

[1] Bossuet, Panégyrique de Saint André.

թապիած իճատ իթմէք խուսուսընտա Առաքեալլար պիւպիւթիւն աճիզ իտիլէր. Քրիստոս ինսան տըր տէյօրլար, եա չուգուստիյէթի թամմէյի, չայիպէսիզ սիյրէթի, հէր տիւրլիւ ինսանի նէզայիստէն միւնէզզէհլիք ֆիքրինի նէ՞րէտէն պուլույօրլար. Քրիստոսըն Ալլահ օլտուղունա ինանըյօրլար, եա օնա համլ իթտիքլէրի պու գատար զայիֆլիյին հիքմէթի նէ՞ տիր. Ս. Ստեփանոսըն վէ Յիսուսըն էօլիւմլէրինի թարիֆ իտէն այնի Ս. Ղուկաս, Ստեփանոսըն էօլիւմիւնէ ֆարգը պիր թագվիյէթ վէրիյօր. Եա չուսաղտա իրատ էյլէտիյի պինազիր նութգա, վերնատունտաքի նութգըն, Երուսաղէմին վէ տիւնեանըն խարապը հազգընտաքի բէյղամպէրլիքլէրինէ նէ՞ տէմէլի, պունլար Քրիստոսատն սաաըր օլմուշ օլմասալար, քի՞մ օնլարը իյճատ իտէպիլէճէքտի. Բարքըր, «Նարզ իտէյիմ քի նէ՝ Պղատոն վէ նէ տէ Նիւթըն տիւնեայա կէլմէմիշտիրլէր. աճէպա օնլարըն կէօսթէրտիքլէրի ահվալը միւթէհայիրէյի քի՞մ եարատըլմըշ տիր, օնլարըն էֆքեարը ոյկյէսինի քի՞մ տիւշիւնէպիլմիշ տիր. Պիր Նիւթըն իյճատ իթմէք իչին պաշգա պիր Նիւթըն օլմագ կէրէք տիր. Եա Յիսուս քիմի՞ն էսէրի թամիլի օլապիլիր. Պիր Յիսուս կէօսթէրէպիլմէք իչիւն անճագ պիր Յիսուս հայիզի գուտրէթ տիր», [1] տէր.

# ՀԻՆ ՎԱՒԵՐԱԹՈՒՂԹԵՐ

## ՕՐԱԳԻՐ
## ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ
### ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵԻՑ ԴԷՄ
### (1827 — 1830)

**Ճումաա կիւնի 30.—** *Իհթիսապ աղասընա ճէմի էսնաֆ քեահեալարը վէ միւթէպէրլէրի չաղըրըլըպ թէքրարէն պու ֆէրման օնտա օքունտու. լաքին Էնկիւրիւլիւ սարրաֆլարընտան պաղըլարը զարպհանէ թարաֆընտան ախզ ու իթալէրի օլմա հասէպի իլէ, մէ՛քս օլտու կիթմէլէրի, թաքիմ իշլէրինի պիթիրինճէ.*

**Ճումաա իրթեսի 31.—** *Զարշամպա կիւնւ քալտըրըլտըքլարը 13 քիշիի պու կիւն սիւրտիւլէր. Ադնաւորլար 3 գարտաշլարը Շիպին Դարահիսարա, Զամիչ օղլու չալճը Յուսէփի, Ճանպազ օղլու Արթինի վէ տիպաճը օղլու Քէվորքու Զանկըրըյա. Էճզաճը Պետրոսու վէ Փորթուգալ օղլու Յուսէփի Թօքատա. Ղազարոս օղլու Բէթրաքը, Երկան օղլու Քիրքորու քի իւք կիւնիւ գալտըրըմըշլար ըտը Էնկիւրիւլիւլէր իլէ, վէ Թավուքճու օղլու Սիմքէշ Մկրտիչի Էնկիւրիւյէ. Թիւթիւնճիւ սարը Ղուկասը Կիւմիւշհանէյէ, Կիւրճիւ քիւրքճիւ Ստեփանը Ախըցղայա, Տայը Օհաննէսի, Բաքամաճը Օհաննէսի, վէ Օղուլլուքեան Քէվորքու Ամասիայա. լաքին պունլարտան պազըլարը քէնտիլիքլէրինտէն վարտըլար Փաշա գաբուսունա, օլմայա արայըպ պուլմայընճա ֆամիլեալարընը տա սիւրմէյէ չըգմաըընլար. նիճէ պու կիւն օլտու իսէ, Շաշեան հէքիմ Մանուէլին ֆամիլեասընա, զիրա Մանուէլի չօգ արայըպ պուլմայընճա, էվինէ ֆէրման կիթտի հէփի օղուլ ուշաղը Իզնիմիտէ նէֆ տէյիւ, վէ ճիւմլէնին ֆէրմանընտա եազըլը իտի, պիր տահի Իսթանպօլա կէրի տէօնմէմէսինէ.* [1]

**Խամեսին սենեսի 1828: Քեանունի սանի 1: Հիճրեթի սենե 1243, ճեմազիւլ ախըր 27.—** *Պու կիճէ սապահա գարշը հէնի սէնէյէ կիրտիքտէ, ափանըզտան Խուրէֆ փաշանըն գավազլարը վէ տէրտէրլէր էվ էվ կէզիպ միւժտէլէտիլէր տէմէ իլէ. չէվքէթլու էֆէնտիմիզ սուչունուզու աֆվ իթտի սիւրկիւն օլմայաճագ. սէֆիլ գաթօլիքլէր պու միւժտէի էսսահ պէօլէյիւպ «վազաա սահիհ իտի» հէր քէս քուտրէթինէ կէօրէ միւժտէլիք վէրտի կէլէնլէրէ, քիմինէ աքճէ, քիմինէ գաւութ վէ քիմինէ սայըը չէյ. պու հավատիս անիտէ Ղալաթա, Պէյ օղլու վէ Պօղազ իչի ճիվարլէրինէ եայըլըպ, հէր էվտէ պիր սէվինճ վէ պիր շագըրգ օլտուքի քի տիլ իլէ թարիֆ օլունմազ լաքին օ չագըըղըն արասը*

[1] Parker (Théodore), Discours sur des matières relatives à la Relagion.

*չօգ սիւրմէյիւպ, տէֆա գասավէթէ թէպտիլ օլտու. Նիճէ էրմէնի ամիրալարը սէպահլայըն տույտուլարսա օլան մասլահաթը քի Նիհայէթ րէճալի քիպարտան ըմըշ քաթօլիքլէրէ անիտէ էթրաֆա ագճէ եիւրիւտիւպ մէրամլէրինի իճրա էթտիլէր. պիր տէ պազարըն տէօրթ պէշ սաաթ իլէրի իշիտիլէն սէվինճ հապէրի թէպտիլ օլուպ, պաշլատը գարա հապէր իշիտիլմէյէ. չի ֆայտա նուֆ օլտու իլք կիւնիւն սէվինճ հէվատիսի.* [2]

**Սալը 3, Չարշամպա 4, Բէրշէնպէ 5.**— *Պու 3 կիւն արտարը էնգարէլի փափազլար վարըպ Թէսքիրէճէլէրինի ալտըլար իլքին Փաթրիքհանէտէն, սոնուն իհթիսապտան ֆէրման մուճիպինճէ. վէ պէօյլէ չըգտըլար եօլա քի օնլարըն իսիմլէրի պունլար տըր.*

*1 Փափազեան միքար Բէվոր քէրապայծար, 2 Գուրպան Պետրոս վարթապետ, 3 Սալանկիւլ Մըքայէլ վարթապետ, 4 Շիշմանեան Անտոն վարթապետ, 5 Աքէլ տէտէ Պետրոս վարթապետ, 6 Քայսէր օղլու Պօղոս վարթապետ, 7 Խապալ լուէր Ստեփան վարթապետ, 8 Շիրինեան Մըքայէլ վարթապետ, 9 Անքօնատան կէլէն Տօն Քլէմէնթի Անդըլան, 10 Զուհաճը օղլու Յարութիւն վարթապետ, 11 Տէրվիշեան Քիրքօր վարթապետ, 12 Կօշկակարեան Ալիքսան վարթապետ, 13 Վարթէրէս օղլու Քիրքօր վարթապետ, 14 Հալաճեան Անտօն վարթապետ, 15 Բէքմէզճեան Անտօն վարթապետ, 16 Համուրճու օղլու Ստեփան վարթապետ, 17 Աքրաեան Քիրքօր վարթապետ. 18 Քալտեան Յովսէփ վարթապետ, 19 Էթէրուզունեան Անտօն վարթապետ, 20 Տէր Մեսրապ վարթապետ, 21 Պէքմէզեան արքալը Հայր Տիմոթէոս վարթապետ, 22 Թընկըրեան Վիէննալը Հայր Կարապետ վարթապետ, 23 Հէքիմեան Լիբանանլը Հայր Օգոստինոս վարթապետ, 24 Լիմօնճեան Լիբանանլը Հայր Օհաննէս վարթապետ, 25 Փիրիմեան Լիբանանլը Հայր Յուսէփ վարթապետ. 26 Լիբանանլը Հայր Թումա վարթապետ.*

*Պու արտտա հայ տէրտէրլէրտէն պիր քաչը ուպուսիյէթ եէյիպ պապը էնկիւրլիւլէրտէն, օնլարը եա Սահթանէյի, եա սիւէր սէմթլի տէյէ տէֆթէրէ կէչիրիպ մէն էթտիրտիլէր օնլարըն սիւրկիւնլիւյիւնիւ. լաքին տրասը չօք կէչմէյիպ ֆօյա մէյտանա չըգընճա, Թէքտիր օլտուլար օ տէրտէրլէր, սէօզիւմ եապանա սիւրկիւնէ վարմա իլէ.* [3]

---

[1] *Ասոնց ամէնուն միւպաշըրը խավաս էր շատ ստակ առին խեղճերէն, որը հինգ հազար, որը եօթը հազար, որը երեք հազար էն մօտ տեղը հազար առնելով տարին, հեմ ասոնցմէ հեմ ասկից սօղըրաքի պացողներէն, հետեւեն քեզի ճապա, անանկ լսեցինք որ հայք կ'ապսպրեն եղեր մուպաշըրներուն թէ սըկէ աս առէք սըկէ նայ։*

[2] *1828 Յունուար 1 Նոր տարի.— Աս գիշեր լուսնու մօտ որ նոր տարի էր, սերասքէր Խուսրէֆ Մէհմէտ փաշային խավաղներէն մէկ քանին, եւ քանի մը տէրտէր ուղղափառաց տուները Պէյ օղլու ջալելով ըսին «կէօզիւնիւզ այտըն, շէֆքէթլու էֆէնտիմիզ սուչունուզու աֆ էթտի, վէ սիւրկիւն մէն օլտու» ամէն մարդ երբ որ այս ձայնը լսեց նէ գրեթէ նոր հոգի մը առին. վասն զի սկսան մէկ մէկու աչքի լոյս ըսելով ուրախանալու, բայց խելացի մարդիկ առջի բերանը չաւատացին, սկսան ըստոյգը փնտռել, յետոյ հասկցուեցաւ աս բանս իրաւ է եղեր, տէրութիւնը ուզեր է աս ձեւը դնել աս բանը. բայց հայք իմանալով որ տէրութիւնը այս ձեւին միտք կ'ընէ կոր դնել գիշերով անիտէ անդին աադին ուր որ պէտք է նէ ստակ ու հէտիյէ տալով կրկին բանը իրենց կողմը դարձուցին, հիմայ ուղղափառաց խնդումը եւ ուրախութիւնը իրենց քովը մնալով սկսան նորէն մտմտալ։*

[3] *2. 3. 4. ԳՇ. ԴՇ. ԵՇ. Հայք աս առջի ըսուած խօսքը գործելու համար սկսան վօրը կոխել Էնկիւրցուոց որ երթան, այս երեք օրուանս մէջ Էնկիւրցի քահանայք գացին Պատրիարքարանը ֆէրմանի մուճիպով Թէսկէրէնին առին, որք են այսոքիկ:...*
*Էնկիւրցոց մէջէն Թընկըրեան Հ. Կարապետը քանի մը օր առաջ բախսու Վիեննայ գնաց Ալիքսան Վ.ը ցաւաքար ըլլալով ցիլին չեն կրնար նստիլ, եւ մընաց, յետոյ Եէրկէն գացօղ քահանայից հետ ճերմակ ծով գնաց։*

*Այս միջոցին մէջ շէհիրցի քահանաները Փրէնկի Երրորդութեան ժամը ամէնքը միատեղ խորհուրդ ըրին սրբութեան առջին երդում ընելու պէս մէկ մէկու հետ եղբօր պէս կապուեցան. խորհուրդնին աս էր Էնկիւրցի քահանաները քշեցին, մէկ կողմէն ալ ժողովուրդը կը քշեն կոր հէլպէթտէ մնացած քահանաներուն ալ պիտոր դպչին, ըսին քահանայք մէկ մէկու պէլքի հայք նեղը ձգելով մեզմէ քանի մը քահանայ ուզեն նէ կէօյա միաբանութիւն ընենք պիտոր տէյի, չըլլայ քի երթանք խօսելու, զիրա միաբանութեան պտուղ չէ*

ըրած գործքերնին. ըսենք թէ ուզեցին չըլլայ քի չորս հինգ հոգի մէջերնէն զատուի երթայ խօսելու, ուզէն նէ ամէնքս ալ միատեղ երթանք, մէկ հոգի, մէկ մարմին ըլլալով չեն կրնար բան մը ընել; էյէր մէկ մէկէ զատուինք նէ ան ատենը ուզածնին կրնան ընել. ամմա մեզ չեն մտիկ ըներ տէ բանտը կը դնեն, կ'աքսորեն, դուռէ (սուրէ) կանցունեն ամէնքս ալ միատեղ կ'ըլլանք եղբօր պէս. եւ ասոր վրայեօք տահա ուրիշ խօսքերով մէկըզմէկու հետ սիրով կապուեցան, եւ աս կապին համար թէֆտէր ըլլուի ըսուածին պէս ամէնքը մէկտեղ գային. հայք ալ չկարծեցին քի ամէնքը անանկ կը ձգեն կերթան, եա մէկ քանին կամ հինգ տասը հոգի մէջերնին կ'ըսեն քի ինչ է մէրամնիդ, մենք ալ միաբանութիւն կ'ըսենք, նեղը կը ձգինք ուզածնիս պէս բանի մը կը կապենք, բայց ըրած կարծիքնին քուռ ու պարապ ելաւ սեւ երեսներուն:

---

Գեր. Մեզմունի վարդապետէն կ'ընդունինք հետեւեալ վաւերաթուղթը և հրապարակաւ կը մատուցանենք իրեն մեր շնորհակալիքը։

## (Պատճէն բնագրոյն)

## ԱՔՍՈՐՎԱԾ ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒՆ ՑՈՒՑԱԿԸ

Հ. Հաափայէլ Ոսկեան Լիբանանցի
Տէր Անտոն Ֆարրաեան
Տէր Յովսէփ Խիւսայեան
Տէր Թովմաս Նամէն Ֆարրաեան
Հ. Իգնատիոս Աւգերեան Լիբանանցի
Տէր Յովսէփ Պահարարեան
Տէր Շմաւոն Ինճիճեան
Տէր Բարսեղ Ասթարեան

Ասոնցմէ Հ. Հաափայէլ Ստամպօլէն և մնացածնիք Հալէպէն սիւրկիւն եղած։ Ասոնք ամէնը հիմայ Լիգուռնա են։

Մեսրովբ Վ. Զրաիեան
Թովմաս Վ. Մաքսուտեան
Թադէոս Վ. Ասկերեան
Ալիքսան Վ. Չէչմէճեան
Հ. Գաբրիէլ Խաչիկեան Լիբանանցի
Հ. Անդրէաս Խալանղճեան
Տէր Կարապետ Եախուտճեան
Տէր Ներսէս Ղազարեան

Ասոնք Ստամպօլէն սիւրկիւն եղան. և ասոնց կէսի չափը Թրեստ գնացին մնացածը Տիրա ատան են։

Հ. Ղուկաս Ինճիճեան Մխիթարեան
Հ. Աւետիք Աւետիքեան Մխիթարեան
Հ. Անդրէաս Շիւքիւրեան Վեննացի
Հ. Գէորգ Ոսկեան Վեննացի
Տէր Մարտիրոս Քէօթահեացի
Տէր Կարապետ Ճիւլիւլեան

Ասոնք Ստամպօլէն սիւրկիւն եղան և հիմայ Թրեստ են։

Թոխաթու քահանայներուն Իզմիր երթալը իմացանք բայց անկից ուր գնացին չենք գիտեր։

Հ. Փիլիպպոս Թէրճէմանեան Մխիթարեան
Հ. Ստեփան Մուրատեան Մխիթարեան
Սերովբէ Վ. Ճէվահիրճեան
Տէր Սահակ Մաղաքեան

Ասոնք Ստամպօլէն սիւրկիւն եղած և հիմայ Միտիլլի են։

Անտոն Վ. Նուրիճանեան
Յովհաննէս Վ. Սէլվեան
Հ. Կարապետ Եսայեան Մխիթարեան
Հ. Գրիգոր Էնքսէրճեան Վեննացի

Ասոնք ալ Ստամպօլէն սիւրկիւն եղան և հիմայ Պուքրէշ են։

Սարգիս Վ. Մելիքեան
Յարութիւն Վ. Զուխաճեան
Հ. Յովսէփ Ոսկեան Վեննացի

Ասոնք Իզմիրէն սիւրկիւն եղած և հիմայ առջի երկուքը Թինօ ըռված ատան են և Հ. Յովսէփ Թրեստ է։

Տէր Յովսէփ Բէքմէզեան, ասիկայ Պուրսայէն սիւրկիւն եղաւ։

Սերովբէ Վ. Զուխուրեան
Յակովբոս Վ. Զուխուրեան
Սարգիս Վ. Պաղտասարեան
Հ. Սրապիոն Պուրիսեան Մխիթարեան
Հ. Եփրեմ Սեթեան Մխիթարեան
Հ. Դանիէլ Պոտուրեան
Տիմոթէոս Վ. Աստարճեան
Տէր Պետրոս Թագւորեան
Տէր Երեմիա Էրզիրումցի
Տէր Յովսէփ Քիւրէլեան
Տէր Պօղոս Նուրիճանեան
Տէր Յովսէփ Էրզիրումցի
Տէր Միքայէլ Հէքիմեան
Տէր Պետրոս Ճէտիտեան
Տէր Անտոն Պէնքլեան

Ասոնք ալ Ստամպօլէն սիւրկիւն եղան և հիմայ Հռովմայ են.

Պետրոս Վ. Պուռնուզեան

Տէր Յովակիմ Քիւլիվեցի և ասոր մէկ տպաւորը.

Տէր Սիմոն Արծթեցի

Տէր Պետրոս Արծթեցի

Տէր Յակովբ Արծթեցի

Տէր Քերովբ Արծթեցի

Տէր Քերովբ Հնձեցի

Տէր Յովհաննէս Հնձեցի

Տէր Ալիքսան Այինճապրակցի

Տէր Պօղոս Օկումեցի

Տէր Գրիգոր Կարնեցի

Տէր Յովհաննէս Նորշենցի

Տէր Յովհաննէս Խտարջուրցի

Տէր Սիմոն Նորշենցի

Տէր Յակովբ Նորշենցի

Տէր Պօղոս Խտարջուրցի

Տէր Գրիգոր Լուսաւեցի տարիկայ ռուսաց երկրէն է ու հարկաւորութեան մը համար Էր-զրում գտնուեր է ան ատենը.

Ասոնք ամէնքն ալ Էրզրումէն սիւրկիւն եղան ու հիմա Լիբանան են.

Խտարջրու քահանաներուն համար իմացանք թէ Իսկէնտէրիէ գնացին. ու անկից ալ հիմայ Լիբանան. բայց ստոյգ խապերնին չառինք.

Իմացանք որ Մէրտինու քահանայները իրենց տեղը մնացեր են, բայց Փրքնիքու. Կիւրինի, Քիլիսու և այլ տեղի քահանայներուն ուր եղածը մինչև հիմայ չիմացանք.

Գէորգ Եպիսկոպոս Փափազեան

Պետրոս Վ. Ղուրպանեան

Ստեփան Վ. Լսերեան

Անտոն Վ. Բէքմէզեան

Պօղոս Վ. Ղայսէրեան

Կղեմէս Վ. Ծուրպազանեան

Միքայէլ Վ. Ապանկիւլեան

Յովհաննէս Վ. Աբելեան

Գրիգոր Վ. Վարդերեսեան

Ստեփան Վ. Համուրճեան

Միքայէլ Վ. Շիրինեան

Անտոն Վ. Տիշմանեան

Տէր Յովսէփ Գալստեան

Տէր Գրիգոր Տէվրիշեան

Տէր Անտոն Էլթէկի Ուզունեան

Տէր Անտոն Հալաճեան

Տէր Գրիգոր Պահատրեան

Տէր Անտոն Էսապալեան

Հ. Թովմա Թէրզի Սահակեան Լիբանանցի

Հ. Օգոստինոս Հեգիմեան Լիբանանցի

Հ. Յովհաննէս Լիմոնճեան Լիբանանցի

Հ. Յովսէփ Փերիմեան Լիբանանցի

Տէր Մեսրովպ Թօքաթլեան

Հ. Տիմոթէոս Բէքմէզեան Մխիթարեան

Ասոնք ամէնը Էնկիւրցի ըլլալնուն համար Էնկիւրի քշվեցան և անկից Ատալիա

Հ. Սահակ Ահարոնեան Լիբանանցի

Տէր Յովհաննէս Իսպէնտիարեան

Տէր Ֆրանչիսկոս Շիրինեան

Տէր Սահակ Պահտիարեան

Ասոնք Էնկիւրի էին. ու անկից սիւրկիւն եղան.

Տէր Յովսէփ Հուպեան. տարիկայ Քէօթահեայէն սիւրկիւն եղաւ.

Տէր Պօղոս Սյլահվէրտեան. տարիկայ Պիլէճիկէն.

Հ. Գէորգ Սրապեան Լիբանանցի

Տէր Յովհաննէս Կիւրեղեան

Ասոնք ալ Տրապիզոնէն. և հիմայ աս ամէնքը Ատալիա են.

# ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԻ

## ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

### „ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ" ԳՐՔԷՆ

Գիրք Ա.—Գլ. ԻԱ. —Սրտի զղջման վրայ

(Շար.)

Ուրիշներուն գործերը մի՛ ստանձներ եւ մեծերու գործառնութեանց մի՛ խառնուիր:

Աչքդ նախ առաջ անձդ քու վրադ սեւեռէ՛, եւ ինքզինքդ մասնաւորաբար խրատէ՛ քու բոլոր սիրելիներէդ աւելի:

Եթէ մարդոց առջեւը շնորհ գտած չես, ասոր համար մի՛ տրտմիր. այլ սա ըլլայ քու տրտմութիւնդ՝ որ այնպէս բարեկարգ ու շրջահայեաց չես, ինչպէս կը վայելէ կենցաղավարիլ Աստուծոյ ծառայի ու ջերմեռանդ կրօնաւորի:

*Օգտակարագոյն եւ ապահովագոյն է յանձնել՝ որ մարդ այս կենաց մէջ շատ մխիթարութիւններ չունենայ, մանաւանդ ըստ մարմնոյ:*

*Սակայն երբ աստուածային մխիթարութիւններ չունինք կամ զանոնք քիչ անգամ կը զգանք, յանցանքը մերն է. որովհետեւ սրտի զղջում չենք փնտռեր, եւ ընդունայն ու արտաքին մխիթարութիւններէ չենք հրաժարիր:*

---

## Ս. ԻԳՆԱՏԻՈՍ ԼՈՅՈԼԱՑԻ

Ս. Իգնատիոս Լոյոլացին ծնաւ 1491ին Սպանիոյ մէջ։ Հայրը, Տոն Պերդրամ, իշխան Օնեէզի և Լոյոլայի, և մայրը՝ Մարին, երկուքն ալ հին ազնուականներու ցեղէ էին։ Իգնատիոս իր մանկութեան օրերը անցուց Լոյոլա գղեակին մէջ ուր ծնած էր։ Երբ քիչ մը մեծցաւ, հայրը զանիկայ արքունիքի յարմար համարելով՝ Ֆերտինանտ Ե. Կաթողիկէ թագաւորին մանկլաւիկ ըրաւ։

Շուտով մեծ յարում ունեցաւ զինուորական վիճակին։ Ուստի երբ զէնք բռնելու կարող տեսաւ ինքզինքը, պաշտօն մը ձեռք բերաւ բանակին մէջ և Նաւառրայի պաշարման և գրաւման ատեն մեծ անձնանուիրութեամբ ծառայեց։ Այս ամբոխին վրայ յարձակած ատեն շատ վտանգներու ենթարկուեցաւ. բայց այն պատճառաւ առողջութեան սաստիկ բաղձանք մը չունեցաւ։ Որովհետև նոյն ատեն թէև աշխարհասէր և կրքոտ էր, սակայն ունէր առաքինութեանց սկզբնաւորութիւններ, որոնք արդէն իսկ զինքը նշանաւոր կը հանդիսացնէին իրեն հասակակից ազնուական երիտասարդներուն մէջ։ Բարեպաշտութիւնը և պարկեշտութիւնը վիրաւորող խօսքեր բերնէն չէր հաներ. սուրբ վայրերը և նուիրական անձերը կը յարգէր. անիրաւութեանց դիւրաւ կը ներէր. զինք թշնամանողներուն հետ անկեղծօրէն կը հաշտուէր, երբ անոնք իրենց ըրածին վրայ ցաւ յայտնէին։ Մասնաւոր տաղանդ մը ունէր՝ իրարու հետ կռուող զինուորները հաշտեցնելու և ժողովրդական խռովութիւնները խաղաղեցնելու։

Յայտնի չէ թէ ինչ պաշտօններ վարեց մինչև 1521, որ ատեն ինք քսանեւինը տարեկան էր և կը գտնուէր Բամբըլիւն քաղաքը Ֆրանսայի։ Այն միջոցին Ֆրանսուա Ա.ին բանակը, հրամանատարութեամբ Անտրէ տը Ֆուա զօրավարին եկաւ քաղաքը պաշարեց։ Երբ Իգնատիոս քաղաքը պաշտպանելու համար ամէն կերպով կ'աշխատէր, քարի բեկոր մը եկաւ ձախ սրունքին դըպաւ, և ռումբ մը աջ սրունքը խորտակեց և զինքը բոլորովին զրկեց պատերազմի մասնակցութենէն։ Նավառրացիք անոր վիրաւորուիլը տեսնելով վհատեցան և անձնատուր եղան։ Ֆրանսացիք մարդասիրաբար Իգնատիոսը իրենց բանակը տարին և վէրքը պատելու խնամելու ջանացին. և երբ սրունքը քիչ մը աղէկցաւ և կրցաւ տեղափոխութիւն ընել զինքը դատակով ղրկեցին Լոյոլա գղեակը, որ Բամբըլիւնէն շատ հեռու չէ։

Երբ Սուրբը հոն հասաւ հասկցուեցաւ որ սրունքը լաւ պատուած չէր և ոսկորները իրենց բնական դիրքով զետեղուած չէին։ Ուստի ենթարկուեցաւ վիրաբուժական երկրորդ կսկծալի գործողութեան մը։ Այս գործողութեան հետեւանքով վրան սաստիկ տենդ մը եկաւ և հետզհետէ այնքան բուռն հանգամանք մը առաւ որ այլևս ապրելու յոյսը կտրեց. ուստի մահուան պատրաստուեցաւ սուրբ Խորհուրդները ընդունելով Սուրբ Պետրոսի և Պօղոսի տօնին նախընթաց օրը։ Բայց յաջորդ գիշերը Առաքելոց Իշխանը տեսիլքի մէջ անոր երեւցաւ, իր օրհնեալ ձեռքերով անոր հպեցաւ և զանիկայ տենդէ ազատեց։ Իգնատիոս իր ապաքինութեան երկար միջոցին ձանձրոյթը փարատելու համար, Սրբոց Վարքը կարդաց։ Այս ընթերցումը իրեն ազդեց աշխարհէ հեռանալու և ապաշխարութեամբ ապրելու բաղձանք մը։ Իր յանցանքները քաւելու համար, քանի որ սրունքը չէր թողուր որ իր մեծ դիտաւորութիւնները գործադրէ, իր հիւանդութեան ներածին չափ ամէն տեսակ մահացուցումներ կ'ընէր։ Ամէն գիշեր գաղտուկ կ'ելլէր, և գետինը ինկած իր յանցանքները կ'ողբար դառնադառն արցունքով։ Իր բարի առաջադրութեանց մէջ զանիկայ աւելի ևս հաստատելու և զօրացնելու համար, գիշեր մը Ս. Կոյսը անոր երեւցաւ՝ Մանուկ Յիսուսը գրկած և լոյսով շրջապատուած։ Այս երեւումը Իգնատիոսի հոգւոյն վրայ շատ սքանչելի ազդեցութիւններ ըրաւ, զանիկայ լեցուց երկնային օծութեամբ, որով սկսաւ պժգալ երկրաւոր հաճոյքներէ։

Երբ ելլելու, պտտելու կարողութիւն ունեցաւ, ծածկաբար տունէն հեռացաւ և Մոնսերրա ուխտ գնաց։ Ճամբան իրեն ընկերացող երկու ծառաները ետ ղրկեց անոնց տալով իր քովը ունեցածին մէկ մասը, և մշտնջենաւոր ողջախոհութեան ուխտ ըրաւ, զոր մինչև իր մահը անարատ պահեց։ Որոշեց նաև ամէն գիշեր ձաղկուիլ ինչ որ հաւատարմաբար պահեց առողջութեան ներածին չափ։ Վերջապէս առաջադրեց այնուհետև ամէն բան Աստուծոյ մեծագոյն փառքին համար ընել, և սոսկ Աստուծոյ հաճոյ ըլլալու համար խորհիլ, խօսիլ, գործել բաղձալ։ Ասկէ հանած է իր կարգին նշանաբանը.

Ի մեծագոյն փառս Աստուծոյ (ad majorem Dei gloriam)։

(Շարունակելի)

## ՍՈՒՐԲ ՍԻՐՏ ՅԻՍՈՒՍԻ

Ամբողջ Կաթողիկէ տիեզերք, Արեւմըտեան եկեղեցին ու Արեւելեանին մեծագոյն մասը, մեծաւ հանդիսութեամբ կատարեցին Յիսուսի Ս. Սրտին նուիրուած Յունիս ամսուան ջերմեռանդութիւնը, մանաւանդ անոր նուիրուած Տօնը, որ կը զիջի Ամենասուրբ Հաղորդութեան Տօնախմբութենէն վերջը եկող չաբթուան Ուրբաթ օրը, որ էր՝ այս տարի, ամսոյս 19։ Ամսոյս վերջանալուն առթիւ կ'ուզենք մենք ալ երկու խօսք ըսել այս աստուածային ու գերազանցապէս մխիթարական ջերմեռանդութեան վրայ, որ թէեւ մեր շատ թեմերուն մէջ տարիներէ ի վեր տարածուած է և ցնծութեամբ կը տօնախմբուի, սակայն դեռ կը զգացուի պէտքը զայն մեկնաբանելու ժողովրդեան, մանաւանդ աւագ թեմիս մէջ, և ընդհանրացնելու անոր փրկութիւնաբեր կիրառութիւնը։ Արդարեւ վերջին ժամանակներու մէջ տիրող անօրէնութեան ոգւոյն դէմ թումբ մը կանգնելու, զաշխարհ ողողող անբարոյութեան և անկրօնութեան աւերներուն դէմ մաքառելու և հաւատքը եւսքանզեւս ամրապնդելու համար է որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս անհուն գթութեամբ հաճեցաւ խեղճ մարդկութեան առջեւ իր Ամենասուրբ, ամենողորմած, ամենօրհնեալ ու երկրպագելի Սիրտը բանալ, ընծայել, և անոր նմանութեան, շնորհաց հաղորդակցութեան, միաւորման և ստացման հրաւիրել ամէն մէկը։ Ձինուորին տիգաւ բացուած ահաւոր վէրքին մէջէն, որ աքսորելոցս համար երկնաւոր հայրենեաց Դուռն եղաւ, ցուցադրեց իր բոցավառ Սիրտը, փուշերով շրջապատուած ու խաչով պսակուած, աստուածային նշանակ իր աննման առաքինութեանց, իր անվերջ շնորհաց, իր աննուազ գթութեան, իր սուրբ եւ ազատարար չարչարանաց ու զոհաբերութեան. իր Սիրտը, որ կազմուած էր Ամենամաքրաս Կուսին գերամաքուր Արիւնէն՝ Հոգւոյն Սրբոյ արարչագործ անբաւ զօրութեան անճառ նրբութիւններով. իր Սիրտը որ, հետեւաբար, անձնականապէս միացաւ Բանին մարմնացելոյ, եւ եղաւ կեդրոնն ամէն զգացմանց Աստուածամարդոյն, յաւիտենից Թագաւորին ու Դատաւորին. ցուցադրեց իր Սիրտը ուրեմն, իբր նշանակ իր Աստուածային անհուն ՍԻՐՈՅՆ, որով սիրեց զմեզ, միեւնոյն սիրոյն՝ որով կը սիրէր իր Հայրը։ Բանն մարդացեալ ամէն ինչ գործեց ըստ սովորութեան մարդոց։ Ջէ՞ որ մարդիկ իրենց սիրոյն նշանակ ըրած են սիրտը. Աստուածաշունչ Գիրք լի են օրինակներով. սիրտն է որ կը սիրէ, սիրտն է որ կը զգայ, կը փափագի, կ'երջանկանայ. մինչեւ իսկ խորհուրդը սրտի կը վերագրուի, քանի որ կամքին հրամանաց ներքեւ է։ Նոյնպէս առածի կարգ անցած է մարդոց մէջ՝ մայրական եւ հայրական սիրտը, նշան գթութեան. առած եղած է սրտի վիրաւորուիլը, տրոփելը, պաղուլը, խռովիլը, տխրութիւնն ու խինդը, ցաւն ու զայրոյթը. սիրտն է մարդն ամենեւին։ Ահա այսպէս է եւ Յիսուսի մէջ. իր Սիրտն է կայան եւ նշանակ իր ամենագերազանց կատարելութիւններուն եւ առ մեզ սնուցած անհատնում Սիրոյն, որով մարդացաւ Աստուած մը, ունայնացաւ Աստուած մը, խաչուած մեռաւ Աստուած մը, որով ստեղծագործեց սքանչելիքներ, իր Եկեղեցին՝ Հարսն անարատ, Ս. խորհուրդները, մանաւանդ անվերջանալի գթութեան՝ Ապաշխարութեան և աներեւակայելի միաւորման՝ Ս. Հաղորդութեան Խորհուրդները, և ամբողջ արարչագործութեան, մարդկեղէն կեանքին չարչարանաց ու պայքարին և իր փրկագործութեան և սքանչելեաց իբր անման synthèse մը, պիտի բոլորջեցնէ ի մեզ իր յաւիտենից երանական փառքը։ Ահա Յիսուսի Սիրտն է որ ըրաւ այս ամէնը. ահա Բանին Աստուծոյ այս իրական Սիրտն է առարկայ մեր ջերմեռանդութեան, մեծարանաց, սիրոյն, նմանութեան ու երկրպագութեան. Ո՜վ գերազնիւ ու մխիթարական Ջերմեռանդութիւն, ո՜վ երանացուցիչ և անմահարար Սիրտ և Սէր Յիսուսի Փրկչին մերոյ։ Այն Սրտին երկրպագեցին մեր Հայրերն ու նախնիք, որոնք երկրպագեցին մարմնացեալ Բանին ամենասուրբ Մարմնոյն, այն Սրտին կ'եր-

կրպագեն մարդիկ դարուց ի դարս, կ'երկրպագեն նաև հրեշտակք, և դեւք կը սարսին և ի փախուստ կը խուճապին։

Այսպէս գեղեցիկ է ուրեմն ջերմեռանդութիւնը Յիսուսի Ս. Սրտին, զոր Ինքն անձամբ յայտնեց մաքրափայլ Կուսին Բարէ-լը-Մօնիալի, Մարգարիտա — Մարիամ Ալաքօքի. իր սէրն էր որ կը զեղուր իր Աստուածային Սրտէն. գանգատեցաւ իր չսիրուելուն համար. մարդիկ, բոլորովին աշխարհայնացած, լքած են զՅիսուս. Իր Ս. Սիրտը հրաւիրեց անհուն գթութեամբ, զարմանալի խոստումներ ըրաւ, որոնք երանական մխիթարութեան աղբիւրներ են իր Ս. Սրտին ջերմեռանդներուն, պատկերը ցուցադրողներուն, յարգողներուն, մանաւանդ այս փրկութենագործ ջերմեռանդութիւնը տարածողներուն անհուն օրհնութիւններ խոստացաւ, ամէն բանի մէջ իր Աստուածային օրհնութիւնը, խնդութիւնը, ամէն տեսակ շնորհքներ, դարձեր, յաջողութիւն յամենայնի. յարատեւութիւն և յաւիտենական փրկութիւն։ Եւ այս անսուտ խոստումները միշտ կ'իրականանան անթիւ անհամար։

Ահա ամփոփումը այս ջերմեռանդութեան խոկութեանը, ամփոփում՝ իբրև կաթիլ մը ի ծովէ։ Հաւատացեալք փորձով պիտի տեսնեն թէ ինչ անհուն գանձ մըն է իրենց և մարդկութեան համար Յիսուսի Ս. Սրտին ջերմեռանդութիւնը, զոր Քահանայապետք Հռոմայ հաստատեցին և հռչակեցին և ընդհանուր կաթողիկէութեան համար նուիրագործեցին, զոր անմահ յիշատակաց արժանին Լեւոն ԺԳ. անուանեց «Կենդրոն և ծղխնի և որոշիչ նշան կաթողիկէութեան և աղբիւր ամենայն բարեաց», և զոր հիմա Հօգեւոր Իշխանութիւնը իրաւամբ ձեռնարկեց ծաւալելու նաև մեր Հայ Կաթողիկեայ Եկեղեցւոյն մէջ։

Ի մէջ անթիւ հեղինակներու, կ'ուզենք մի միայն Ս. Ֆրանչիսկոս Սալեզացիին այս ջերմեռանդութեան համար գրած նախագուշակ խօսքերն ի մէջ բերել։

«Մեր Տէրը, կ'ըսէ, ուզեց որ իր կողը բացուի շատ պատճառներու համար։ Նախ՝ որպէս զի տեսնուին իր սրտին խորհուրդները, որ սիրոյ և խանդաղատանքի խորհուրդներ էին նկատմամբ մեզի, իր սիրելի զաւակներուն և ցանկալի արարածներուն զորոնք ստեղծեց իր պատկերին եւ նմանութեան համեմատ. որպէս զի տեսնենք թէ ո'րչափ կը բաղձայ մեզի տալ շնորհքներ և օրհնութիւններ, և նոյն իսկ իր սիրտը, ինչպէս ըրաւ Սրբուհի Կատարինէ Սիենացւոյն։ Կը հիանամ այն անզուգական շնորհքին վըրայ որով ինքը անոր հետ իր սիրտը փոխեց. որովհետեւ այս կոյսը առաջ կ'աղօթէր սապէս. «Տէ՛ր, քեզի կը յանձնեմ իմ սիրտս»։ Բայց այնուհետև կ'ըսէր. «Տէ՛ր, քեզի կը յանձնեմ քու սիրտդ». այնպէս որ Աստուծոյ սիրտը իր սիրտն էր։ Արդարև պէտք է որ բարեպաշտ հոգիները ունենան Աստուծոյ սիրտը, անոր հոգին, անոր կամքը, անոր զգացումները, անոր բաղձանքները, մէկ խօսքով պէտք է որ ամբողջովին Անոր ըլլան։

Երկրորդ՝ որպէս զի իրեն երթանք բովանդակ վստահութեամբ, իր կողին մէջ առանձնանալու և ծածկուելու և հանգչելու համար, տեսնելով որ զայն բացած է զմեզ հոն ընդունելու համար անզուգական բարութեամբ և սիրով, եթէ զմեզ իրեն տանք և զմեզ ամբողջովին և անպահեստ յանձնենք իր բարութեան և նախախնամութեան։» (Քարոզ ԺԱ. 1616)

Այսպէս 1674 և 1675ի յայտնութիւններէն յիսուն տարի աւելի առաջ Ս. Ֆրանչիսկոս Սալեզացին կը գուշակէր Ս. Սրտին ջերմեռանդութիւնը և անոր ճամբաները կը պատրաստէր. Ինք կը հրաւիրէր նկատելու նոյնինքն Յիսուսի Սիրտը, այն՝ որ կողին բացուածքէն երևան կու գայ։

Այս սրտին մէջ ուրեմն կը գտնենք այն ցաւերը որ կրեց, և այն սիրոյ խորհուրդները, որոնցմէ եկած են մեզի ամէն բարիք։ Մեր նուաղած սէրը կը բորբոքի այս հնոցին մէջ. հոս կը սովրինք ինքզինքնիս մահացնել, իրեն նուիրուիլ ամբողջովին, եւ իր օրէնքներուն հպատակ ապրիլ։ Այս է մեր հանգստեան եւ ապաւէնի անդը։

## ՆԻՒԹԻՆ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

*Թէեւ ոմանք կը կարծեն թէ նիւթին ներքին կազմութեան հետազօտութեան մէջ գիտութեան ըրած յառաջդիմութիւնը մեծ մասամբ արդիւնք է մանրացոյցներու կատարելագործումին. այս կարծիքը բոլորովին անհիմն է, և հիմայ պիտի տեսնենք թէ արուեստական գործիքները այս մասին չեն կրնար օգտակար ըլլալ։*

*Արդարեւ ցանցենիին* (rétine) *տարրը, որով առարկաները կը տեսնենք, բաղադրեալ մարմնի մը մասնիկէն կամ պարզ մարմնի մը հիւլէէն մեծ է։ Աւելի լաւ կայ. մենք ինչպէս կը տեսնենք մարմինները։ Անոնց մակերեւոյթին վրայ սփռուած երեւցող գոյնին միջոցաւ։ Բայց այդ գոյնը մեր մէջ կը տպաւորուի թրթռումներով։ Արդ նիւթին վերջին մասնիկը՝ լոյսի ամենափոքր ծածանումէն շատ աւելի փոքր ծաւալ ունի անշուշտ. ասկէ կը հետեւի թէ հիւլէ մը, օրինակի համար, չի կրնար գոյն ունենալ։*

*Նիւթի վերջին մասնիկին տրուած բառը իմաստ չունի այլ եւս. հիւլէ մը ո՛չ սեւ է, ո՛չ կարմիր, ո՛չ սպիտակ, ո՛չ անփայլ, ոչ փայլուն, և սակայն կազերու և ճառագայթաւոր մարմիններու են. վրայ կատարուած մանրազննին փորձեր և բնազանցական պատճառաբանութիւններ թոյլ կուտան մեզի հիւլէի մը մեծագոյն քանակին մասին գաղափար մը կազմել։*

*Արդէն, Հաւիւի քահանան, արդի բիւրեղագրութեան գտիչը, կարծիք ունեցած էր նիւթին անլուր բաժանականութեան մասին։ Եւ իրօք յաջողած էր ձեռք բերել թիթղոնի* (mica) *մասնիկ մը, որ հազիւ* 43 *միլիոներորդ հազարորդամէտր ծաւալ ունէր։*

*Ուրիշ նուրբ, ճարտարահնար նկատողութիւններով, հին բնագէտները կը համարէին թէ գնդասեղի մը գլուխը առնուազն կը բովանդակէ* 8 000 000 000 000 000 000 000 *հիւլէ, այսինքն* 8 *վեցիլիոն հիւլէ։ Այս ցնորական թիւէն մենք բան մը չենք հասկնար. բայց պարզ հաշիւ մը մեզի ցոյց կու տայ որ եթէ այդ գնդասեղին գլխէն, ամէն մանրերկրորդ, մէկ միլիոն հիւլէ անջատէինք, մեր աշխատանքը* 253 *միլիոն տարուան մէջ հազիւ վերջ պիտի գտնէր։ Հասարակ աղին մէկ հազարորդակրամը երբ* 3 *միլիոն մասերու բաժնուի, յայտնի է թէ շատ փոքր բան մը կ՚ըլլայ. բայց նիւթի այս կտորը լուսապատկերացոյցով* (spectroscope) *կրնանք տեսնել իբրեւ դեղին գիծ մը կանթեղի մը բոցին մէջ։ Այս կողմէն, մեր հոտոտելիքը մեր տեսանելիքէն աւելի զգայուն է. որովհետեւ կը յայտնէ սենեակի մը մէջ մէկ հարիւրորդ միլիոներորդ հազարորդակրամ մանշակերպի* (iodoforme) *գոյութիւնը։*

*Եթէ կարելի ըլլար մէկ հազարորդակրամ ռատիումը երկրիս վրայ գտնուող երկու երկիլիոն մարդոց բաժնել. իւրաքանչիւր մարդ պիտի կրնար այս մարմինը ըստ բաւականի ուսումնասիրել Գիւրիի հնարած գերզգայնիկ գործիքին օժանդակութեամբ։ Բայց արդի բնագէտները աւելի առաջ գացեր են և հաւաստեր են թէ ինչ որ մենք* հիւլէներ *այսինքն* անբաժանելի *մասեր կը նկատէինք, մանրագոյն մասնիկներու ստուար կոյտերէ բաղադրուած թանձր զանգուածներ են։ Օրինակի համար, ջրածինի իւրաքանչիւր հիւլէն կը կազմուի առնուազն* 2,000 *անջատ մասնիկներէ որ* ելեկտրոն *կը կոչուին և անլուր արագութեամբ կը դառնան խոշոր զանգուածի մը շուրջը, որ անոնց միջակէտը կը գտնուի, և նուազական ելեքտրութեամբ լեցուած է և կը կոչուի* եօն*։*

*Ծանօթ է ամենուս Երեւակ գեղեցիկ մոլորակը որ շրջապատուած է փոշիի մանեակով մը։ Արդ եթէ խոշորցնենք ջրածինի մէկ հիւլէն, հաւանականաբար այն հիանալի մոլորակին տեսքը կ՚ունենանք։*

*Այս անգամ ևս կրնանք ըսել թէ եօն մը կամ ելեկտրոն մը ո՛չ ջերմ է, ո՛չ ցուրտ է, ո՛չ գունաւոր է, ո՛չ թափանցիկ, անիկայ այնքան տկար է որ չի կրնար լոյսի կամ ջերմութեան հոսանք մը կասեցնել։ Եւ սակայն այս յօրինուածութիւնը միայն, որուն ծանօթացեր ենք փորձերով, կրնայ մեր առջեւ պարզել նիւթին բովանդակած ուժին պատառը։ Բանի որ այն մանր մասնիկներուն*

իւրաքանչիւրը կեդրոնական գունդին շուրջը, երկվայրկեանի մը մէջ, շատ հազարամէտր արագութեամբ կը դառնայ, կրնանք հասկնալ թէ անոնց ամբողջութիւնը օժտեալ է արտակարգ ուժերով որոնք մեր նկատողութենէն կը խուսափին. որովհետև այս նոր ձևին տակ հիւլէն իր հին անըմբռնելիութիւնը կը պահէ. Մ. Ց. Բէռէն այս մասին մի քանի թելադրիչ օրինակներ տուաւ՝ ապացուցանելով թէ երկու փոքր գնդակներ, որոնցմէ մին պարունակէ մէկ հազարորդակրամ ջրածնի եօն, իսկ միւսը՝ 35 հազարորդակրամ քլոր, դէպի իրար կը կը մղուին 100 եռիլիոն տակառաչափ ուժգնութեամբ. Ահա այն դաղտնիքը զոր ատենով խնամութիւն կը կոչէին.

(Շարունակելի)

## ՔԱՀԱՆԱԼԱՐԸ ՊԷՍԼԷՄԷՔ

Եօյլէնէ տօղրու պապա իչինտէն ավտէթ էյլէր. Սուֆրայա օթուրուրլար.

Գաբու եավաշճա չալընըր.

— Ժէրմէ՛ն, կիթ գաբույը աչ.

Ալթը եաշընտա պիր գըզճըղազ կիտէր գաբույը աչար վէ պիր վարդապետ իչէրի կիրէր.

— Տօսթլարըմ, պէն սիզին ժողովրդապետինիզ իմ.

Պապա, անա միւթէհայիր պիր սուրէթտէ սուֆրատան գալգարլար, իքի քիւչիւքլէր գալգմազլարսա տա կէօզլէրինի այըրմըշ պու կէլէն միսաֆիրէ պագարլար.

— Էֆէնտի՛, նէ՞ իսթէյօրսընըզ, տէր պապա.

Վարդապետ էթրաֆընա պիր աթֆը նազար իտէր... հիչ պիր թարաֆտա պիր խաչիյութիւն եօգ... պիլ աքիս օտանըն թամ օրթա եէրինտէ տէֆօլքէ պիր գաալըն սուրէթի աըլմըշ տըր... էվ սահիպլէրինին տէ թավր ու հարաքէթլէրինտէն վէ պագըշլարընտան անլաշըլըյօր քի օնլար պու կիպի զիյարէթլէրէ ալըշգըն տէյիլ տիրլէր.

— Էֆէնտի, սիզտէն սատագա իսթէմէք իչին կէլմիշիմ. Ժողովրդապետութիւնըմա պուլընան պիւթիւն էվլէրի տօլաշըյօրում. Սիզէ կէլմէյէճէք օլսամ, պէլքի սիզէ պիր հագարէթ եափմըշ սայըլըրըմ ֆիքրի իլէ, գաբունըզը չալտըմ....

Պապա էօյլէ պիր թարզտա գարըշընըն եիւզիւնէ պագտը քի,

— Շու բաբազլար նէ՛ գատար միւզիճ ատէմլէր տիր, տէմէք իսթէյօր օլտուղը հալինտէն անլաշըլըյօրտը.

Քահանայ սէօզիւնէ տէվամ իտէրէք,

— Տօսթլարըմ, տէր, պու կիւն սիզտէն իսթէտիյիմ սատագա քահանալարըն իաշէսի իչին տիր, չիւնքի գանուն օնլարը աճըգտան էօլմէյէ մահքիւմ պիր հալէ կէթիրմիշ տիր.

Էվ սահիպի, բաբազըն պու աէտիքլէրինին տօղրու օլտուղընը պիլզզաթ քէնտի թէճրիպէսիյլէ թաստիք իտիյօրտը... չիւնքի հէր կիւն օգուտըղը ղազէթալարտա բաբազլար ալէյհինտէ նէլէր եազըլը օլտուղընը կէօրիւյօրտը... «բաբազլար ճէմաաթըն սէֆալէթի եիւզիւնտէն կէչինէն տալգավուգլար տըրլար... իշ կիւճ եափմազ թէնպէլլէր տիրլէր ... հիչ պիր իշէ եարամայան պօշ ատամլար տըրլար քի ճէմաաթըն հիսսիյաթը տինիյէսինի սուի իսթիմալ իտէրլէր...» Վէլ հասըլ տահա պունուն կիպի պին պիր տիւրլիւ իֆթիրալարլա սընըֆը ռուհպանըն թէրզիլ իտիլտիյինի, կէօզտէն չըգարըլտըղընը պիլիյօր վէ պու եիւզտէն տէ բէնչէյի բէրիշանիյէ կիրիֆթար օլան բաբազըն պիրի տէ գարշըսընտա պուլունույօրտը. Մա մաֆիհ սէրթ պիր սէս իլէ,

— Բաբազ էֆէնտի՛, գանուն գանուն տըր, ճէվապընը վէրիր.

— Խայըր, էֆէնտի, աըլ հագգ սահիպլէրինին հագգընը սէլպ իտէն պիր գանուն գանուն տէյիլ տիր... սիզին վար օլանընըզ հագգսըզլըգլա էլինիզտէն ալընսա նէ՞ տէրտինիզ....

— Նէ՞ եափարտըմ... չալըշըրտըմ... պէնի պիր թէնպէ՞լ մի զաննը իտիյօրսընըզ....

Պունը տէր վէ պու օլան հագարէթտէն հուզուրընտա գըբ գըրմըզը քէսիլմիշ օլան բաբազա գարշը էլլէրինի գավուշտուրուր, տուրուր. վէ ազ սօնրա,

— Պանա պազըրըզ, արթըգ ճէմաաթ ալտանըմազ... ծնըն գանըն չօգ էմտինիզ... էվլէրիր արթըգ... զէման էսկի զէման տէյիլ տիր...։

Քահանայ պայթայը թաշա ու բուտուգըրըն փարգընտա օլուր։

Գաբուլը էլիլէ չէքիպ էվտէն չըգմագտա իքէն, էվ սահիպի իչէրիտէն,

— Էլլէրին, գօլլարըն վար ալըր... տիլէնէճէք հէրտէ ծնյարը գուլլան...։

Բաբազ պունըն իւզէրինէ սավուշուպ կիթտիքտէն սօնրա, մէնզարէնին իպթիտասընտան պէրի հիչ աղզընը աչմամըշ օլան գարըը, հազին պիր սուրէթտէ,

—Քահանայը նի՛չին գօվտըն... նա պաշըմըզա պիր պէլա կէլիրսէ... տէտի։

Սուֆրայա օթուրուլտար։ Սուֆրանըն սօնունա տօղրու արթըգ իքի թարաֆըն տա թէհամմիւլ իտէճէք հալի գալմամըշտը... պիր պէհանէյէ պէքլէյօրլարտը...։ Նիհայէթ պապա պաշլատը զէմանըմըզ ֆէլաքէթլէրինին սէբի սէպէպի օլան բաբազլարտ... մէգնէպէ... հիւրրիյէթ տիւշմէնլէրինէ... աթըգ թութմայա... քէնտինին ֆիքիրլէրինէ իշթիրաք իթմէյէն գարըըսնա... չօգ բաթըըրտը իտէն էվլատլարընա սէօյլիւպ սայմայա։

Ասապիլիյէ թութմուշ արթըգ նէ տէյիպ վէ նէ սէօյլէյէճէյինի շաշըրմըշ էթրաֆընա պագընըպ տուրույօրտը։

Նիհայէթ վագթը կէլիպ տէ.իչինէ կիտէճէյի զէման գարըըսնա տէօնէրէք տէր.

— Կէօրիւյօ՞րմըսըն, էվլիմիզէ իլք տէֆա պիր բաբազ կէլտի, էվի ալթ իւսթ իթտի. պիզի պիրպիրիմիզէ տիւշիւրտիւ...։ Պունլար կիպի ուղուրսուզ պայղուշ օլամազ...։ Պէն ծնլարը գապուլ իթմէք իսթէմէյօրսամ, համթթա գօվույօրսամ հագգըը տէյի՛լմիյիմ։

Շիտտէթլիճէ գաբուլը չէքէր, սավուշըր կիտէր։

(Մապասի վար)

# ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ.— Յունիս 12ին շատ սրտաշարժ արարողութիւն մը կատարուեցաւ Հռոմ, Մարիամու Ֆրանչիսկեան Առաքելուհիներուն եկեղեցւոյն մէջ, Ալեարտի Կարդինալին նախագահութեամբ. Վաթսուն մանկամարդ մայրապետներ՝ Չինաստան, Հնդկաստան, Փոքր-Ասիա, Գոնկօ, Նաթալ՝ առաքելութեան երթալու կը պատրաստուէին։ Միւս Ֆրանչիսկեան Առաքելուհիները, Հ. Մանպրինիի քարոզէն յետոյ, եկան իրենց ուղեւոր քոյրերուն ոտքերը համբուրեցին, մինչ երգչախումբը կը հնչեցնէր մեկնումի երգը. Յետոյ Վսեմ. Կարդինալը Սուրբ Հաղորդութեան օրհնութիւնը տուաւ։

Նոր Առաքելուհիներու խումբը կը բաղկանայ աւելի Ֆրանսուհիներէ և Իտալուհիներէ. մէջերնին կայ նաև մի քանի Աւստրիացի, Սպանիացի, մէկ Շիլեցի, երկու Հիւսիսային Ամերիկացի, երկու Պոլոնիացի, մէկ Հոլանտացի, առնցմէ զատ նաև երկու Չինացի, որ Հռոմի մէջ աւարտած ըլլալով իրենց կրօնական կրթութիւնը կը դառնան իրենց հայրենիքը իբրեւ Առաքելուհի։

Ամէնուն դէմքին վրայ փայլող ուրախութիւնը մեծ շինութիւն տուաւ ներկաներուն։ Չինաստան գացող կարեւոր խումբին պիտի միանան նաև տասը ուրիշ Առաքելուհիներ՝ Մարսիլիայէն։

.·. Լուրտի մէջ Յուլիս 22—26 գումարուելիք Հաղորդութեան Համաժողովին մասնակցելու համար աշխարհիս ամէն կողմէն ստուար թիւով եկեղեցական բարձրաստիճան անձնաւորութիւններ սկսած են արդէն հոն հասնիլ։ Մինչեւ Յունիս 10 այն տեղ ժամաներ են 170 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, որոնց 10ը կարդինալ են։ Ասոնց մէջ կը գտնուին. 1 հոգի Գերմանիայէն, 1 Անգղիայէն, 4 Աւստրիայէն, 1 Պելճիքայէն, 1 Պուլկարիայէն, 2 Սկովտիայէն, 7 Սպանիայէն, 63 Ֆրանսայէն և Ալճէրիայէն, 1 Յունաստանէն, 3 Հունգարիայէն, 2 Իռլանտայէն, 16 Իտալիայէն, 1 Լիւքսէնպուրկի մեծ դքսութենէն, 4 Բորթուգալէն, 1 Ռուսիայէն, 1 Զուիցերիայէն, 9 Ասիական Թուրքիայէն, 3 Չինաստանէն, 2 Արեւելեան Հնդկաստանէն, 3 Հնդկաչինէն, 3 Ափրիկէի զանազան կողմերէն, 2 Անգիլեաններէն, 8 Պրազիլիայէն, 7 Գանատայէն, 1 Շիլիէն, 6 Գոլոմպիայէն, 7 Միացեալ Նահանգներէն, 1 Մեքսիկայէն, 1 Բանամայի հանրապետութենէն, 1 Բարակուայէն, 1 Բերուէն, 1 Արժանդինէն, 2 Վենեզուելայէն և 3 Աւստրալիայէն։

Ուստի այս համաժողովը իրօք միջազգային և ընդհանրական պիտի ըլլայ։

### Համաժողովին օրակարգը

Չորեքշաբթի 22 Յուլիս.— Կէսօրէն յետոյ ժամը 3ին, բացման հանդիսաւոր նիստ. պիտի խօսի Վսեմ. Պատուիրակ Կարդինալը։

Երեկոյին, ժամը 5ին, Թափոր Ս. Հաղորդութեան։

Հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, յուլիս 23, 24 և 25ին, առաւօտեան 9—11, գումարում զանազան մասնախումբերու։

Ժամը 11ին, գումարում քահանայական։

Կէսօրէն յետոյ ժամը 1—3 գումարում տիկիններու համար՝ առաջին երկու օրերը, իսկ երկրորդ օրը, շաբաթ, երիտասարդներու համար։

Կէսօրէն յետոյ ժամը 3—5 ընդհանուր ժողով։

Երեկոյեան ժամը 5ին, Թափօր Ս. Հաղորդութեան։

Կիրակի օր, Յուլիս 26։—Առտուն, Բոգայրին մէջ պիտի պատարագէ Վսեմ. Պատուիրակ Կարդինալը։

Կէսօրէն յետոյ տեղի պիտի ունենայ փակման հանդիսական Թափօրը։

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ. — Հետեւեալ պաշտօնական գրութիւնը Ամեն. Հոգեւոր Տիրոջ կողմէ Յունիս 20ին ղրկուեցաւ Աւագ Թեմի ժողովրդապետներուն.

ՊԱՏՐ. Կ. ՀԱՅՈՑ

**Թիւ 7809** Կ. Պոլիս, Բերա, 20 Յունիս 1914

. . . Տէր,

Ստոյգ աղբիւրէ լսեցինք որ վարչական ըսուած ժողովը ձեռնարկեր է իբրեւ թէ ազգային Աւագանւոյ Ընդհանուր Ժողովի մը ընտրութեան. և այս նպատակաւ տպագրուած հրահանգներ, ցանկեր և քուէտոմսեր կը ցրուէ Մեր ժողովրդեան ամէն անհատներուն,

Արդ, Մեր Կրօնական Ժողովին միաձայն որոշողութեամբ կը ծանուցանենք ձեզի որ, վաղը, կիրակի, ժողովուրդին աւելի ստուար թիւով եկեղեցի յաճախած միջոցին, ազդարարէք նախ՝ որ այսպիսի ընտրութիւն մը բոլորովին ապօրինի է, և այդ վարչական ըսուած ժողովը բնաւ իրաւասութիւն չունի այս ընտրութեան, որ բացառաբար կը պատկանի Հոգեւոր Պետի գահերէցութեամբ օրինաւորապէս գումարուած ժողովի մը։ Երկրորդ՝ իմացուցէ՛ք ժողովրդեան որ կղերը ոչ թէ միայն չէ միացած հակառակորդաց հետ՝ այս ընտրութեան համար, այլ եւ կը բողոքէ այդ ապօրինի ձեռնարկին դէմ. և ոչ մէկ քահանայ պիտի ընդունի մասնակցիլ այդպիսի հակօրինական ժողովքի մը։

Հետեւաբար ծանուցէ՛ք և մեկնեցէ՛ք ժողովուրդին որ հրամանաւ Հոգեւոր Իշխանութեան արգիլուած է որ եւ իցէ մասնակցութիւն վերոյիշեալ ընտրական գործին։

Եւ հաւատացէք սիրոյ եւն.

.˙. Յունիս 20ին Պոլիս հասաւ Արհի. Անտոն Եպիսկոպոս Պահապանեան, միճակաւոր Կեսարիոյ որ Լուրտ պիտի երթայ՝ առաջիկայ Հաղորդութեան Համաժողովին մասնակցելու համար։

.˙. Յունիս 22ին դէպի Լուրտ մեկնեցաւ Գեր. Կղեմէս Վ. Աստուրեան, Մեծաւոր Աստուածածնին եկեղեցւոյ, Ս. Հաղորդութեան Համաժողովին մասնակցելու համար։

.˙. Յունիս 24ին Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ այցելութեան եկաւ Արհիապատիւ Սոնտաք, առաքելական Նուիրակ Պարսկաստանի, որ Յունիս 23ին Պոլիս ժամանեց և երկու օր կենալէ վերջ մեկնեցաւ դէպի Հռոմ։

.˙. Դպրոցներու ամավերջի քննութիւնները սկսած են։ Յունիս 23ին և 25ին, Արհիապատիւ Յովսէփ արքեպիսկոպոս Ռուքսեան ներկայ գտնուեցաւ Ա. Յ. Կարգին մայր-վանատան կրօնական դասերու քննութեանց որ գոհացուցիչ էին։

.˙. Կիրակի օր, ամսոյս 21ին, ցաւալի դէպք մը կը պատահէր Սամաթիոյ մեր եկեղեցւոյն բակին մէջ։ Երեկոյեան ժամը 10ին, երբ Մեծ.-Ժողովրդապետ Գեր. Անտոն Վ. Ժամկոչին հետ իր եղբօր տունէն կը վերադառնար, ուր ընթրելու գնացած էր Անկիւրիայէ եկած իր կրտսեր եղբօր՝ Պետրոս վարդապետի հետ, եկեղեցւոյն դրան քովը կեցող Յարութիւն Բարսեղեան, այն եկեղեցւոյն կաթողիկէ վարժապետը, սկսաւ լուտանքներ տեղացնելու «չո՛ւտ ըրէք, անպիտաններ» և այլն պոռալով։ Երբ մօտեցաւ, նոյն և աւելի գռեհ խօսքեր կը կրկնէր վարդապետին հասցէին. վարդապետը ըսաւ. «պատասխանի արժանի չես», և դուռը բացաւ ու ներս մտաւ, և հազիւ դուռը գոցուած էր, այս վարժապետը յանկարծուստ վարդապետին գլխուն հարուածներ սկսաւ իջեցնել իր խոշոր գաւազանովը։ Վարդապետը յանկարծակիի գալով. գլխուն հարուածէն շուարած կ'իյնայ. ժամկոչը անճարակ ծերուկ մը, չի գիտեր ի՛նչ ընէ. իսկ վարժապետը գազանային կատաղութեամբ կը շարունակէ հարուածները «զքեզ պիտի սպաննե՛մ» պոռալով. մինչեւ որ ձեռքի այն հաստ գաւազանը երկու կտոր կ'ըլլայ, և ա՛ն ատեն միայն կը դադրի հարուածելէ։ Արդ, վարդապետը առած է երեք ծանր վէրք գլխուն վրայ, որ բացուած է մինչեւ գանկը, վէրք մը աջ այտին վրայ, աչքի այտուցով. վէրք մը շրթունքին վրայ, և խախտած է առջեւի ակռաներուն, թեւին, ձեռքին վրայ երկայն և լայն ճզմլուածքներ (contusion) կան. արիւնը հոսած է առատ. իր ճերմկեղէնները, մօրուքը ու պարեգօտը արիւնաթաթախ են։ Նոյն գիշերը ոստիկանութիւնը զեկուցում առած և տեղեկագիր յօրինած է, և ոստիկանութեան բժիշկը տուած է իր մանրամասն տեղեկագիրը։

Գեր. վարդապետին որ անկողնոյ մէջ է, այցելած ու մխիթարած է Ամեն. Հոգեւոր Տէրը, ինչպէս նաեւ իր Արհի. Փոխանորդը և բազմաթիւ քահանայք։

Այս ոճրագործ երիտասարդը Վանցի է. և ի մանկութեան ղրկուած էր ի Հռոմ՝ Լեւոնեան հայ վարժարանը, ուր տեսնուելով թէ իր հեստ բնաւորութեամբ յարմարութիւն չունի եկեղեցական կոչ-

ման, արտաքսուած է։ Հոս Սամաթիոյ վարժարանին ուսուցիչ կարգուելով, հին ըմբոստ խմբակալութեան՝ որուն երկու անդամներն էջմիածնական եղան, շատ սիրելի եղած է թէ՛ մեր ընթացականերուն կատարեալ յարումովը, ի հաշիւ անոնց ժողովրդապետին դէմ անդադար ի գործ դրուած չահատակութիւններովը, և թէ՛ կաթողիկէ Ս. Կրօնիս դէմ գործուած մոլեգին նախատինքներովը։ Բնական է որ ժողովրդապետը զինք կը խրատէր, մերթ կը յանդիմանէր՝ յուղղութիւն բերելու համար. մանաւանդ հայրաբար բայց խստիւ կը յորդորէր զինքը երեկոյին ուշ չմնալ (այս երիտասարդը կէս գիշերէն մէկ ժամ երբեմն երկու ժամ վերջը կուգար) և հակառակ իր պնդելուն, թոյլ չտուաւ Մեծաւորը որ դրան բանալին յանձնուի անոր, այլ առիթէ որ ժամանակին գայ եկեղեցին ուր կ'անցընէր գիշերը։ Եւ որովհետև անիկայ անուղղայ էր, կը փափաքէր նաև պաշտօնանկ ընել, թոյլ չտալու համար որ թունաւորէ մանուկները... Inde. irae. անտի զայրոյթը... ինչո՞ւ չկրցաւ... ո՛չ մէկուն համար ծածկուած մըն է այս։ Անոնք որ յանուն ազգասիրութեան՝ ազգը, և յանուն կաթոլիկէութեան՝ կաթոլիկէութիւնը կը ծախեն կործանել, կը պաշտպանեն այսպիսի արարածները. և անկրօններուն կը յանձնեն մեր մատաղ մանուկները, չխորհելով անաչառ դատաւորին տրուելիք հաշիւը։ Վարչական բռնուած ժողովը, այդ Վանցի ծրագրործ երիտասարդին անցեալները ՀԻՆԳ ոսկի տուեր է Սամաթիոյ եկեղեցւոյն պահանջին ի հաշիւ, առանց բնաւ բան մը հարցնելու կամ զեկուցանելու եկեղեցւոյն Մեծ.-ժողովրդապետին, որ միանգամայն Ատենապետ է Թաղական Խորհրդոյ. այսպէս կը յարգեն օրինաւորութիւնը և կանոնադրութիւնը, անոնք որ զօրհանապազ կ'աղաղակեն կղերին անկանոնութենէն դէմ...

Ահա ուրեմն այս Վանցին իրենց համար Enfant gâté մը, չփացած պուտակ մը, իսկ ինչպէս մինչև հիմա տուած անթիւ պտուղներէն. նոյնպէս այս պտուղէն ալ ճանչցէ՛ք ծառը։ Մենք ի սկզբանէ գիտէինք։

Աստուած օր մը յառաջ ազատէ՛ այս խեղճ հաստատութիւնը։

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Բ. Դուռը մեծ տէրութեանց Կ. Պոլսոյ դեսպաններուն հաղորդեց ծանուցագիր մը, որով յունական գաղթումն արգիլելու մասին ձեռք առած միջոցները պարզելով, կ'առաջարկէ տեսակ մը միջազգային քննութիւն, իրողութիւնները հաստատելու համար։ Ծանուցագիրն որ չորս մեծ էջերէ կը բաղկանայ, ստորագրուած է Եպարքոսին կողմէ,

—Թուրքե հելլէն տագնապը կարգադրուած կ'երևի, թէև մանրամասնութեանց նկատմամբ համաձայնութիւնը դեռ ամբողջացած չէ։ Բ. Դուռը, Թալէաթ պէյի Փոքր Ասիա ուղեւորած միջոցին կացութիւնը բարւոքելու մասին իր հաստատամտութեան ապացոյցը տուաւ։ Եւրոպական ներկայացուցիչներուն կողմէ Փոքր Ասիոյ մէջ կատարուելիք քննութիւնները կ'երևի մը վտանգին առաջքն առին, քանի որ թէ՛ Թուրքիա և թէ Յունաստան հաշտարար տրամադրութիւններ ցոյց կուտան։

.˙. Կը հաւաստուի թէ Բէօսթէնճէի տեսակցութեան արդիւնքն եղած է համաձայնութիւն մը Ռուսիոյ և Ռումանիոյ միջև, Պալքանեան խնդրոց մէջ այս երկու տէրութիւններուն հետեւելիք ուղղութեան մասին։ Ռուսիա յանձնառու եղած է օգնել Ռումանիոյ որ պահպանէ պալքանեան հաւասարակշռութիւնը։

.˙. Հանր. շինութեանց, ելմտական և երկրագործական նախարարութիւնները նշանակեցին այն պաշտօնեաները, որ վերահսկիչ Հօֆ ու Վէսթէնէնք պէյերն երբ հոս ժամանեն, պիտի ընկերանան իրենց ճիւղերուն մէջ բարենորոգմանց խնդիրներով զբաղելու համար։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Դէպքեր եւ սկզբունքներ . . . . . . . . . . . . 401
Յիսուս Քրիստոս . . . . . . . . . . . . 403
Հին վաւերաթուղթեր . . . . . . . . . 405
Նորնեակ Քրիստոնէի . . . . . . . . . . 408
Սուրբ Սիրտ Յիսուսի . . . . . . . . . . . . 410
Նիւթին խորհրդաւոր կազմութիւնը . . . . . . . . . 412
Քահանայարք պէսլէմէք . . . . . . . . . . 413
Տեղեկագրական . . . . . . . . . . . 414



ԱՐՏՕՆԱՏԷՐ — ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԷՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ — ԳԷՈՐԳ Մ. Վ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպարան Կ. Արծագանգ Շաբաթաթերթի. Բէրա. Փայրամ փողոց թիւ 5. Կ. Պոլիս

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**.— Թուրքիոյ համար տարեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— Մէկ թիւ՝ 1 դհկ.։— Արտասահման՝ տար. Ֆր. 10. վեցամս. 5.— Վճարումնք կանխիկ են.

**ՀԱՍՑԷ**.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս։

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

---

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ**.— 1.— Արձագանգ կը հրատարակուի Շաբաթ օրերը։ 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն ղրկուած ո և է յօդուած։ 3.— Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին։ 4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր։ Յօդուածներու 5.— Ձեռագիրները պէտք է գրուած ըլլան՝ թուղթին մէկ կողմը միայն։ 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին։ 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դահեկանի նամականիշ ի միասին ղրկել։

---

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.։

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.։

---

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5։ Տպարանս [illegible] ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար։ Կը տպուին ամեն տեսակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-տուըէներ, մահազդներ, ևլն. ևլն.։ Գիները անմրցելի կերպով աժան են։ Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան։

# WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves : 49.000.000

## SIÈGE CENTRAL:

VIENNE I. Schottenring

### SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE : *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapeste, Budweis, Czernowitz, Drohobyez, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemysl, Salsburg, St. Poelten, Stanislau, Tarnopol, Tarnow, Tepitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau:*

EN TURQUIE : *Constantinople et Smyrne.*

### SUCCURSALE DE CONSTANTINOPLE

*Siège à Galata, Place du Pont de Karakeuy*
*Agences à Stamboul, Péra et Scatari.*

Le Wiener Bank-Verein fait toutes opération de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;
Escompte d'effets de commerce;
Achat et vente de change sur l'Etranger:
Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;
Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;
Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;
Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;
Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;
Garde de titres, marchandises etc.
Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. 1/2 % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.